

մերձաւոր մեր պատմութեան աշխարհը: Ձախճախեց զայն, «զորս դու պատուիրեսցեր», դիւանագիտական խորունկ իր հմտութեամբ: Զուր չէ, որ Բիւզանդ Քէչեանը մեծ դէմք է մեր մէջ: Արեւելահայերը զայն՝ դիւանագիտութիւնը, կ'արհամարհեն իբր անօգուտ զբաղում ու կը ծաղրեն մեր այդ նանիր հետաքրքրութիւնը, որ հոմանիշ է բարձր գիտութեան, Խրիմի պատերազմէն սկիզբ առնող, հասած իր ոսկեդարին 78ի պատրիարքական պատուիրակութեամբ եւ 61րդ յօդուածով: Վկայ՝ մեր խմբագիրներու, գործիչներու, հրապարակագիրներու զարհուրելի քանակը, տակաւին մինչեւ այսօր, երբ երկիր իսկ չունինք ու ամէն օր, հարիւրի հասնող թերթերու բերնով դիւանագիտական իմաստութիւն կը քարոզենք իրենց հացին բեռովը տազնապուն զանգուածներուն: Մինակ մեր մէջ կարելի հրաշք է, որ այսքան քիչ ընթերցողներով այսքան շատ դիւանագէտ խմբագիրներու գոյութիւնը ապահովենք: Ահաւոր վանեցի՛ն: Դիւանագէտ՝ այնքան, որ պիտի ընէր տասը աչքովներուն չորածը իր չունեցած աչքերովը, Վանէն մինչեւ Պոլիս, Եգիպտոս... Ու եթէ Տէրը կամենայ՝ մինչեւ Ամերիկաները, ճամբորդելով զբօսաշրջիկի մը պէս անվախ, յամառ եւ օգտապաշտ ի սէր իր կրթարանին: Ահաւոր վանեցի՛ն: Որ կարկամեցուց «պոյ» երիտասարդը թուականներովը բոլոր հեռագիրներուն, դիւանագիտական դիմումներուն, աղերսագիրներուն, Ազգային մեծ ժողովոյ կողմէ խմբագրուած քագ-րիրներու^(*) - պատրիարքարանէ, մամուլէ, գաւառական ժողովներու խողովակով քաղաքագէտներէ համախառնուրդ:

Ընկեր Մաթիկը տարիքով շատ էր մատաղ՝ լրջութեամբ դատելու համար այն սերունդը, որուն ազգային

(*)Թագրիք.- Պատրիարքին միջոցով Բարձրագոյն Դրամ մերկայացուցած տեսակ մը յիշատակագիր: